| 3.2.5 | Срок освоения образовательной программы высшего и послевузовского профессионального образования по очной форме обучения устанавливается в соответствии с государственными образовательными стандартами Российской Федерации и Республики Армения.<br>Сроки обучения по очно-заочной (вечерней) и заочной формам, а также в случае сочетания различных форм обучения при реализации образовательных программ высшего профессионального образования могут увеличиваться на срок до 1 года по сравнению со сроками обучения по очной форме на основании решения Ученого совета Университета.<br>Решением Ученого совета Университета может сокращаться срок обучения в Университете лиц, имеющих среднее профессиональное образование соответствующего профиля или высшее профессиональное образование различных ступеней, а также лиц, способных освоить в полном объеме основную образовательную программу высшего профессионального образования за более короткий срок. Условия освоения указанными лицами основных образовательных программ высшего профессионального образования в сокращенные сроки определяют соответствующие органы государственной власти Российской Федерации и Республики Армения. | 3.2.5 | Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ուսումնական ծրագրերի առկա ձևով յուրացման ժամկետը սահմանվում է Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան:<br>Բարձրագույն մասնագիտական կրթության կրթական ծրագրերի առկա-հեռակա (երեկոյան) և հեռակա ձևերով իրականացման, ինչպես նաև ուսուցման տարբեր ձևերի զուգակցման դեպքում Համալսարանի Գիտական խորհրդի որոշման հիման վրա ուսման ժամկետները կարող են երկարաձգվել առկա ձևով ուսման ժամկետների համեմատ՝ մինչև 1 տարի ժամկետով:<br>Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ համապատասխան ուղղվածության միջին մասնագիտական կրթություն կամ տարբեր աստիճանի բարձրագույն մասնագիտական կրթություն ստացած անձանց, ինչպես նաև այն անձանց, ովքեր կարող են բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրն ամբողջ ծավալով յուրացնել ավելի կարճ ժամկետում, Համալսարանում ուսանելու ժամկետը կարող է կրճատվել: Նշված անձանց կողմից սեղմ ժամկետներում բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերի յուրացման պայմանները սահմանում են Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության պետական իշխանության համապատասխան մարմինները: |
| 3.2.6 | Организация учебного процесса в Университете по образовательным программам высшего профессионального образования регламентируется рабочим учебным планом по направлению подготовки (специальности) и расписанием учебных занятий для каждой формы обучения, которые разрабатываются и утверждаются Университетом самостоятельно на основе государственного образовательного стандарта высшего профессионального образования, примерных (рекомендательных) образовательных | 3.2.6 | Համալսարանում բարձրագույն մասնագիտական կրթության կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպումը կանոնակարգվում է համապատասխան ուղղությամբ (մասնագիտությամբ) աշխատանքային ուսումնական պլանով և յուրաքանչյուր ձևի ուսման համար ուսումնական պարապմունքների դասացուցակով, որոնք Համալսարանի կողմից մշակվում և հաստատվում են ինքնուրույն՝ բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների, օրինակելի |

| | | | |
|---|---|---|---|
| | программ, учебных планов по направлению подготовки (специальности). | | (համձնարարական) կրթական ծրագրերի՝ պատրաստման ուղղությամբ (մասնագիտությամբ) ուսումնական պլանների հիման վրա: |
| 3.2.7 | В Университете учебный год для студентов очной и очно-заочной (вечерней) форм обучения начинается 1 сентября и заканчивается согласно рабочему учебному плану по данному направлению подготовки (специальности).<br>Ученый совет Университета вправе переносить сроки начала учебного года, но не более чем на 2 месяца.<br>Сроки начала и окончания учебного года для студентов заочной формы обучения устанавливаются рабочим учебным планом. | 3.2.7 | Համալսարանում ուսման առկա և առկա-հեռակա (երեկոյան) ձևերի ուսանողների համար ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ին և վերջանում տվյալ պատրաստման ուղղության (մասնագիտության) աշխատանքային ուսումնական պլանին համաձայն:<br>Համալսարանի Գիտական խորհուրդն իրավունք ունի ուսումնական տարվա սկսման ժամկետները տեղափոխել, բայց ոչ ավելի, քան 2 ամսով:<br>Ուսման հեռակա ձևի ուսանողների համար ուսումնական տարվա սկիզբը և ավարտը սահմանվում են աշխատանքային ուսումնական պլանով: |
| 3.2.8 | Учебные занятия в Университете проводятся в виде лекций, консультаций, семинаров, практических занятий, лабораторных работ, контрольных работ, коллоквиумов, самостоятельных работ, научно-исследовательской работы, учебной, производственной и преддипломной практики, курсового проектирования (курсовой работы), а также путем выполнения квалификационной работы (дипломных проектов или работы, магистерской работы и диссертаций).<br>Университет может устанавливать другие виды учебных занятий.<br>Для всех видов аудиторных учебных занятий академический час устанавливается в пределах 45-50 минут. | 3.2.8 | Համալսարանում ուսումնական պարապմունքներն անցկացվում են դասախոսությունների, խորհրդատվությունների, սեմինարների, գործնական պարապմունքների, լաբորատոր աշխատանքների, ստուգողական աշխատանքների, ուսումնազրույցների, ինքնուրույն աշխատանքների, գիտահետազոտական աշխատանքի, ուսումնական, արտադրական և նախադիպլոմային պրակտիկայի, կուրսային նախագծման (կուրսային աշխատանքի) ձևերով, ինչպես նաև որակավորման աշխատանքի (դիպլոմային նախագծերի կամ աշխատանքների, մագիստրոսական աշխատանքի և ատենախոսությունների) կատարմամբ:<br>Համալսարանը կարող է սահմանել ուսումնական պարապմունքների այլ տեսակներ:<br>Բոլոր տեսակի լսարանային ուսումնական պարապմունքների համար ակադեմիական ժամը սահմանվում է 45-50 րոպեների սահմաններում: |
| 3.2.9 | Университет путем целенаправленной организации учебного процесса, выбора форм, методов и средств обучения, использования дистанционного обучения создает условия для освоения | 3.2.9 | Համալսարանն ուսումնական գործընթացի նպատակաուղղ կազմակերպման, ուսման ձևերի, մեթոդների և միջոցների ընտրության, հեռահար ուսուցման օգտագործման |

| | |
|---|---|
| образовательных программ определенного уровня и направленности. | ճանապարհով պայմաններ է ստեղծում որոշակի մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրերի յուրացման համար: |
| 3.2.10 Университет оценивает качество освоения образовательных программ путем осуществления текущего контроля успеваемости, промежуточной аттестации обучающихся и итоговой аттестации выпускников. | 3.2.10 Համալսարանը կրթական ծրագրերի յուրացման որակը գնահատում է ուսման առաջադիմության ընթացիկ հսկողության, սովորողների միջանկյալ ատեստավորման և շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման իրականացմամբ: |
| 3.2.11 Система оценок при проведении промежуточной аттестации обучающихся, формы и порядок ее проведения определяется настоящим Уставом.<br>Промежуточная аттестация обучающихся в Университете проводится в форме экзаменов и зачетов. Для дисциплин и видов учебной работы, по которым формой промежуточной аттестации обучающихся является экзамен, устанавливаются оценки «отлично», «хорошо», «удовлетворительно» и «неудовлетворительно»; если формой промежуточной аттестации обучающихся является зачет, устанавливаются оценки: «зачтено» и «незачтено».<br>Положение о проведении текущего контроля успеваемости и промежуточной аттестации обучающихся утверждается Ученым советом Университета. | 3.2.11 Սովորողների միջանկյալ ատեստավորումն իրականացնելիս գնահատականների համակարգը, դրա անցկացման ձևերը և կարգը սահմանվում են սույն Կանոնադրությամբ:<br>Սովորողների միջանկյալ ատեստավորումը Համալսարանում անցկացվում է քննությունների և ստուգարքների ձևով: Այն առարկաների և ուսումնական աշխատանքների տեսակների համար, որոնց միջանկյալ ատեստավորման ձևը սովորողների համար քննությունն է, սահմանվում են «գերազանց», «լավ», «բավարար» և «անբավարար» գնահատականները, եթե սովորողների միջանկյալ ատեստավորման ձևը ստուգարքն է, սահմանվում են «ստուգված» և «չստուգված» գնահատականները:<br>Սովորողների առաջադիմության ընթացիկ հսկողություն և միջանկյալ ատեստավորում անցկացնելու մասին դրույթը հաստատվում է Համալսարանի Գիտական խորհրդի կողմից: |
| 3.2.12 Итоговая аттестация выпускника Университета является обязательной и осуществляется Государственной аттестационной комиссией после освоения образовательной программы в полном объеме.<br>Итоговая аттестация осуществляется Государственной комиссией в соответствии с порядком, установленным соответствующими органами государственной власти Российской Федерации и Республики Армения и положением, утвержденным Ученым советом. | 3.2.12 Համալսարանի շրջանավարտի ամփոփիչ ատեստավորումը պարտադիր է և իրականացվում է Պետական ատեստավորման հանձնաժողովի կողմից կրթական ծրագրի ամբողջ ծավալի յուրացումից հետո:<br>Ամփոփիչ ատեստավորումը իրականացվում է Պետական հանձնաժողովի կողմից, Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության պետական իշխանության համապատասխան մարմինների կողմից սահմանված կարգով և Գիտական խորհրդի կողմից հաստատված դրույթին համապատասխան: |
| 3.2.13 Выпускнику, успешно прошедшему все установленные виды итоговых | 3.2.13 Ամփոփիչ Պետական ատեստավորման մեջ մտնող բոլոր |

| | |
|---|---|
| аттестационных испытаний, входящих в итоговую Государственную аттестацию, Университет присваивает соответствующую квалификацию (степень) и выдает два диплома о высшем профессиональном образовании: государственного образца Российской Федерации и государственного образца Республики Армения | սահմանված տեսակների ամփոփիչ ատեստավորման քննությունները հաջողությամբ հանձնած շրջանավարտին Համալսարանը շնորհում է համապատասխան որակավորում (աստիճան) և հանձնում բարձրագույն մասնագիտական կրթության մասին երկու դիպլոմներ՝ Ռուսաստանի Դաշնության պետական նմուշի և Հայաստանի Հանրապետության պետական նմուշի: |
| 3.2.14 Выпускнику Университета и обучающемуся, выбывшему до окончания Университета, выдается академическая справка и соответствующий документ об образовании, на основании которого он был зачислен в Университет, заверенная копия которого остается в личном деле. Все прочие документы (выписки из приказов о зачислении, об окончании или выбытии, зачетная книжка, студенческий билет) остаются для хранения в личном деле. | 3.2.14 Համալսարանի շրջանավարտին և Համալսարանն ավարտելուց առաջ հեռացած սովորողին տրվում է ակադեմիական տեղեկանք և կրթության մասին համապատասխան փաստաթուղթ, ինչի հիման վրա նա ընդունվել է Համալսարան, և որի վավերացված պատճենը մնում է անձնական գործի մեջ: Բոլոր այլ փաստաթղթերը (ընդունման, ավարտման կամ հեռացման մասին հրամանների քաղվածքները, ստուգման գրքույկը, ուսանողական տոմսը) մնում են անձնական գործի մեջ պահելու համար: |
| **3.3 Научная деятельность Университета** | **3.3 Համալսարանի գիտական գործունեությունը** |
| 3.3.1 Основными задачами Университета в научной, научно-исследовательской и научно-технической областях (далее - научная) являются:<br>- развитие наук посредством научных исследований и творческой деятельности научно-педагогических работников и обучающихся;<br>- получение новых знаний, становление и развитие научных школ и ведущих научных коллективов по важнейшим направлениям науки и техники;<br>- создание опережающего научного задела по основным направлениям научной деятельности Университета;<br>- обеспечение единства учебного и научного процессов и подготовка квалифицированных специалистов и научно-педагогических кадров высшей квалификации на основе новейших достижений научно-технического прогресса;<br>- сохранение, укрепление и приумножение базисного, определяющего | 3.3.1 Գիտական, գիտահետազոտական և գիտատեխնիկական (այսուհետ՝ գիտական) բնագավառներում Համալսարանի հիմնական խնդիրներն են՝<br>- գիտությունների զարգացումը՝ գիտամանկավարժական աշխատողների և սովորողների գիտական հետազոտությունների և ստեղծագործական գործունեության միջոցով,<br>- նոր գիտելիքների ձեռք բերումը, գիտության և տեխնիկայի կարևորագույն ուղղություններով գիտական դպրոցների և առաջատար գիտական կոլեկտիվների կայացումը և զարգացումը,<br>- Համալսարանի գիտական գործունեության հիմնական ուղղություններով առաջանցիկ գիտական ներուժի ստեղծումը,<br>- գիտատեխնիկական առաջընթացի նորագույն նվաճումների հիման վրա ուսումնական և գիտական գործընթացների միասնության ապահովումը և որակյալ մասնագետների |

| | | | |
|---|---|---|---|
| | характера науки;<br>- создание условий для защиты интеллектуальной собственности Университета и прав авторов как основы укрепления и развития вузовской науки. | | ու բարձրագույն որակավորում ունեցող գիտամանկավարժական կադրերի պատրաստումը,<br>- գիտության հենակետային, որոշիչ բնույթի պահպանումը, ամրապնդումը և բազմապատկումը,<br>- Համալսարանի մտավոր սեփականության և հեղինակների իրավունքների պաշտպանության համար պայմանների ստեղծումը՝ որպես բուհական գիտության ամրապնդման և զարգացման հիմք: |
| 3.3.2 | Научная и инновационная деятельность, осуществляемая Университетом, финансируются за счет средств федерального бюджета Российской Федерации и государственного бюджета Республики Армения и внебюджетных средств Университета. Научная деятельность в Университете может также осуществляться за счет грантов или средств других заказчиков. Грантами Университет распоряжается в соответствии с законодательством Российской Федерации и Республики Армения в порядке, обусловленном органом, юридическим или физическим лицом, предоставляющим гранты. | 3.3.2 | Համալսարանի կողմից իրականացվող գիտական և նորարարական գործունեությունը ֆինանսավորվում են Ռուսաստանի Դաշնության դաշնային բյուջեի և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների և Համալսարանի արտաբյուջետային միջոցների հաշվին: Համալսարանում գիտական գործունեությունը կարող է իրականացվել նաև դրամաշնորհների կամ այլ պատվիրատուների միջոցների հաշվին: Համալսարանը դրամաշնորհները տնօրինում է Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ դրամաշնորհներ տրամադրող մարմնի, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից պայմանավորված կարգով: |
| 3.3.3 | Научные работы в Университете выполняются:<br>- профессорско-преподавательским составом и научными работниками, специалистами научных подразделений Университета, в соответствии с индивидуальными планами;<br>- студентами в ходе выполнения курсовых, дипломных работ, предусмотренных учебными планами, в студенческих научных обществах, кружках, на кафедрах и в научно-исследовательских подразделениях;<br><br>- аспирантами, соискателями, докторантами и стажерами-исследователями Университета в соответствии с индивидуальными планами их подготовки.<br>К выполнению научных работ | 3.3.3 | Համալսարանում գիտական աշխատանքներն իրականացվում են՝<br>- պրոֆեսորադասախոսական կազմի և գիտական աշխատողների, Համալսարանի գիտական ստորաբաժանումների մասնագետների կողմից՝ անհատական ծրագրերին համապատասխան,<br>- ուսանողների կողմից ուսումնական պլաններով նախատեսված կուրսային, դիպլոմային աշխատանքներ իրականացնելու ընթացքում, ուսանողական գիտական ընկերություններում, խմբակներում, ամբիոններում և գիտահետազոտական ստորաբաժանումներում,<br>- Համալսարանի ասպիրանտների, հայցորդների, դոկտորանտների և փորձնակ-հետազոտողների կողմից՝ իրենց պատրաստման անհատական |

| | |
|---|---|
| могут быть привлечены работники предприятий, учреждений и организаций всех форм собственности в свободное от основной работы время в соответствии с действующим законодательством Российской Федерации и Республики Армения. | ծրագրերին համապատասխան: Գիտական աշխատանքների իրականացմանը կարող են ներգրավվել ձեռնարկությունների, հիմնարկների և սեփականության բոլոր ձևերի կազմակերպությունների աշխատողները հիմնական աշխատանքից ազատ ժամանակ՝ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան: |
| 3.3.4 Организация управления и реализация научно-исследовательской деятельности в Университете осуществляется через соответствующие структурные подразделения науки и инноваций, научно-исследовательские институты и центры, проблемные научные группы, лаборатории и кафедры. | 3.3.4 Համալսարանում կառավարման կազմակերպումը և գիտահետազոտական գործունեության իրագործումն իրականացվում է գիտության և նորամուծությունների համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների, գիտահետազոտական ինստիտուտների և կենտրոնների, պրոբլեմային գիտական խմբերի, լաբորատորիաների և ամբիոնների միջոցով: |
| 3.3.5 Инициативные и поисковые исследования планируются Университетом самостоятельно в соответствии с тематическими планами, утвержденными Ученым советом Университета. | 3.3.5 Նախաձեռնող և որոնողական հետազոտությունները ծրագրվում են Համալսարանի կողմից ինքնուրույն՝ Գիտական խորհրդի կողմից հաստատված թեմատիկ ծրագրերին համապատասխան: |
| 3.3.6 В случае ликвидации Университета соответствующие органы государственной власти Российской Федерации и Республики Армения принимают меры для обеспечения сохранности банков и баз данных научной и (или) научно-технической информации, а также документированной информации с ограниченным доступом. | 3.3.6 Համալսարանի լուծարման դեպքում Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության պետական իշխանության համապատասխան մարմինները միջոցներ են ձեռնարկում գիտական և (կամ) գիտատեխնիկական տեղեկատվության բանկերի և տվյալների բազաների, ինչպես նաև սահմանափակ մուտքով տեղեկատվության պահպանության ապահովման համար: |
| **3.4 Подготовка, переподготовка, повышение квалификации научно-педагогических, научных кадров и специалистов** | **3.4 Գիտամանկավարժական, գիտական կադրերի և մասնագետների պատրաստում, վերապատրաստում, որակավորման բարձրացում** |
| 3.4.1 Подготовка научно-педагогических и научных кадров осуществляется в аспирантуре и докторантуре Университета в соответствии с действующим законодательством Российской Федерации и Республики Армения, а также путем стажировки, прикрепления соискателей | 3.4.1 Գիտամանկավարժական և գիտական կադրերի պատրաստումն իրականացվում է Համալսարանի ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում, Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության գործող |

| | |
|---|---|
| ученых степеней к указанным учреждениям или организациям.<br>Порядок подготовки научно-педагогических и научных кадров в системе послевузовского профессионального образования утверждается соответствующими органами государственной власти Российской Федерации и Республики Армения. | օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև ստաժավորման, գիտական աստիճանի հայցորդներին նշված հիմարկններին կամ կազմակերպություններին կցելու ճանապարհով:<br>Հետբուհական մասնագիտական կրթության համակարգում գիտամանկավարժական և գիտական կադրերի պատրաստման կարգը հաստատվում է Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության պետական իշխանության համապատասխան մարմինների կողմից: |
| 3.4.2 Число лиц, принимаемых в аспирантуру и докторантуру Университета для обучения за счет бюджетных средств, и порядок их приема устанавливаются ежегодно соответствующими органами государственной власти Российской Федерации и Республики Армения.<br>Университет вправе осуществлять прием сверх установленных государственных заданий по приему в аспирантуру и докторантуру для подготовки кандидатов наук и докторов наук на основании договоров, заключаемых с юридическими и (или) физическими лицами при условии оплаты ими стоимости обучения. | 3.4.2 Բյուջեի միջոցների հաշվին ուսանելու համար Համալսարանի ասպիրանտուրա և դոկտորանտուրա ընդունվող անձանց թիվը և նրանց ընդունելության կարգը յուրաքանչյուր տարի սահմանվում են Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության պետական իշխանության համապատասխան մարմինների կողմից:<br>Համալսարանն իրավունք ունի ընդունելություն իրականացնել գիտությունների թեկնածուներ և գիտությունների դոկտորներ պատրաստելու համար ասպիրանտուրա և դոկտորանտուրա ընդունելության սահմանված պետական առաջադրանքներից ավել իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց հետ պայմանագրերի հիման վրա՝ նրանց կողմից ուսման արժեքը վճարելու պայմանով: |
| 3.4.3 При Университете могут создаваться диссертационные советы по защите диссертаций и присуждению ученых степеней в порядке, установленном законодательствами Российской Федерации и Республики Армения. | 3.4.3 Համալսարանում կարող են ստեղծվել թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների պաշտպանության և գիտական աստիճանների շնորհման ատենախոսական խորհուրդներ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: |
| 3.4.4 Повышение квалификации научно-педагогических работников Университета проводится не реже одного раза в 5 лет в Университете, образовательных учреждениях системы повышения квалификации и профессиональной | 3.4.4 Համալսարանի գիտամանկավարժական աշխատողների որակավորման բարձրացումը անցկացվում է ոչ ուշ, քան 5 տարին մեկ անգամ Համալսարանում, որակավորման բարձրացման և կադրերի |

| | |
|---|---|
| переподготовки кадров, в высших учебных заведениях, в ведущих российских, армянских и иностранных научных и производственных организациях путем обучения, прохождения стажировок, подготовки и защиты диссертаций, участия в работе семинаров, конференций, а также с использованием других видов и форм повышения квалификации. | մասնագիտական վերապատրաստման համակարգի կրթական հիմնարկներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում, առաջատար ռուսական, հայկական և օտարերկրյա գիտական ու արտադրական կազմակերպություններում ուսուցման, ստաժավորում անցնելու, ատենախոսության պատրաստման և պաշտպանության, սեմինարների, կոնֆերանսների աշխատանքում մասնակցության ճանապարհով, ինչպես նաև որակավորման բարձրացման այլ տեսակների և ձևերի օգտագործմամբ: |
| 3.4.5 Профессиональная переподготовка специалистов является самостоятельным видом дополнительного профессионального образования, проводится с учетом профиля полученного образования специалистов и осуществляется Университетом через структурные подразделения в соответствии с действующим законодательством Российской Федерации и Республики Армения, по дополнительным профессиональным образовательным программам двух типов, один из которых обеспечивает совершенствование знаний специалистов для выполнения нового вида профессиональной деятельности, другой - для получения дополнительной квалификации. | 3.4.5 Մասնագետների մասնագիտական վերապատրաստումը լրացուցիչ մասնագիտական կրթության ինքնուրույն տեսակ է, անցկացվում է մասնագետների ստացած կրթության ուղղվածության հաշվառմամբ և իրականացվում է Համալսարանի կողմից՝ կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով, Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան, երկու տեսակի լրացուցիչ մասնագիտական կրթական ծրագրերով, որոնցից մեկն ապահովում է մասնագետների գիտելիքների կատարելագործում նոր տեսակի մասնագիտական գործունեություն իրականացնելու, մյուսը՝ լրացուցիչ որակավորում ստանալու համար: |
| 3.4.6 Профессиональная переподготовка для выполнения нового вида профессиональной деятельности осуществляется на основании установленных квалификационных требований к конкретным профессиям и должностям.<br>Профессиональная переподготовка для получения дополнительной квалификации проводится по дополнительным образовательным программам, формируемым в соответствии с государственными требованиями к специалистам для присвоения дополнительной квалификации, установленными соответствующими органами государственной власти Российской Федерации и Республики Армения. | 3.4.6 Նոր տեսակի մասնագիտական գործունեության համար մասնագիտական վերապատրաստումն իրականացվում է կոնկրետ մասնագիտությունների և պաշտոնների վերաբերյալ սահմանված որակավորման պահանջների հիման վրա:<br>Լրացուցիչ որակավորում ստանալու համար մասնագիտական վերապատրաստումն անցկացվում է լրացուցիչ կրթական ծրագրերով, որոնք ձևավորվում են մասնագետներին լրացուցիչ որակավորում շնորհելու համար ներկայացված պետական պահանջներին համապատասխան՝ սահմանված Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության պետական իշխանության համապատասխան մարմինների կողմից: |

| | |
|---|---|
| | |
| 3.4.7 Профессиональная переподготовка специалистов осуществляется на основе договоров, заключенных Университетом с органами исполнительной власти, органами службы занятости населения и другими юридическими и физическими лицами.<br>Право реализации дополнительной профессиональной образовательной программы возникает у Университета после проведения лицензирования соответствующими органами государственной власти Российской Федерации и Республики Армения, если иное не предусмотрено государственным образовательным стандартом высшего или среднего профессионального образования по направлениям или специальностям и государственным образовательным стандартам послевузовского профессионального образования по соответствующей отрасли наук. | 3.4.7 Մասնագետների մասնագիտական վերապատրաստումն իրականացվում է Համալսարանի կողմից գործադիր իշխանության մարմինների, բնակչության զբաղվածության ծառայության մարմինների և այլ իրավաբանական ու ֆիզիկական անձանց հետ կնքած պայմանագրերի հիման վրա:<br>Լրացուցիչ մասնագիտական կրթական ծրագրի իրագործման իրավունքը Համալսարանը ձեռք է բերում Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության պետական իշխանության համապատասխան մարմինների կողմից լիցենզավորում անցկացնելուց հետո, եթե այլ բան նախատեսված չէ բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներով՝ ըստ ուղղությունների կամ մասնագիտությունների և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներով՝ ըստ գիտության համապատասխան ճյուղի: |
| **3.5 Международная и внешнеэкономическая деятельность Университета** | **3.5 Համալսարանի միջազգային և արտաքին տնտեսական գործունեությունը** |
| 3.5.1 Университет имеет право осуществлять международное сотрудничество в области высшего, послевузовского и дополнительного профессионального образования, научной и (или) научно-технической, преподавательской и иной деятельности в соответствии с законодательством и международными договорами Российской Федерации и Республики Армения. | 3.5.1 Համալսարանն իրավունք ունի իրականացնել միջազգային համագործակցություն բարձրագույն, հետբուհական և լրացուցիչ մասնագիտական կրթության, գիտական և (կամ) գիտատեխնիկական, մանկավարժական և այլ գործունեության բնագավառում՝ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և միջազգային պայմանագրերին համապատասխան: |
| 3.5.2 Профессиональная подготовка, переподготовка и повышение квалификации граждан иностранных государств в Университете, преподавательская и научно-исследовательская работа работников Университета за рубежом в пределах установленных квот осуществляются в соответствии с законодательством Российской Федерации и Республики Армения на основе межгосударственных соглашений, соглашений между соответствующими органами | 3.5.2 Համալսարանում օտարերկրյա քաղաքացիների մասնագիտական պատրաստումը, վերապատրաստումը և որակավորման բարձրացումը, Համալսարանի աշխատողների մանկավարժական և գիտահետազոտական աշխատանքը արտերկրում սահմանված մասնաքաժինների (քվոտաների) սահմաններում իրականացվում են Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ |

| | |
|---|---|
| государственной власти Российской Федерации и Республики Армения и соответствующими органами государственной власти иностранных государств, а также по прямым договорам, заключенным Университетом с иностранными юридическими лицами, в том числе учебными заведениями, или с иностранными гражданами. | միջպետական համաձայնագրերի, Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության պետական իշխանության համապատասխան մարմինների և օտարերկրյա պետությունների պետական իշխանության համապատասխան մարմինների միջև համաձայնագրերի, ինչպես նաև օտարերկրյա իրավաբանական անձանց, այդ թվում՝ կրթական հաստատությունների կամ օտարերկրյա քաղաքացիների հետ Համալսարանի անմիջական կնքած պայմանագրերի հիման վրա: |
| 3.5.3 Университет вправе заниматься внешнеэкономической деятельностью в соответствии с законодательством Российской Федерации и Республики Армения и своим Уставом. | 3.5.3 Համալսարանն իրավունք ունի զբաղվել արտաքին տնտեսական գործունեությամբ՝ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և իր Կանոնադրությանը համապատասխան: |
| **4. СТРУКТУРА УНИВЕРСИТЕТА** | **4. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ** |
| 4.1 Университет самостоятельно формирует свою структуру, за исключением создания, реорганизации, переименования и ликвидации филиалов.<br>Структура Университета определяется решением Ученого совета. Структура и штатное расписание Университета утверждаются приказом ректора. | 4.1 Համալսարանն ինքնուրույն է ձևավորում իր կառուցվածքը՝ բացառությամբ մասնաճյուղերի ստեղծման, վերակազմակերպման, անվանափոխման և լուծարման:<br>Համալսարանի կառուցվածքը սահմանվում է Գիտական խորհրդի որոշմամբ: Համալսարանի կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատվում են ռեկտորի հրամանով: |
| 4.2 В состав Университета входят факультеты по направлениям подготовки специалистов, кафедры по отраслям знаний, аспирантура, докторантура, центр довузовского образования с подготовительными отделениями (факультетами и курсами), библиотека, издательство, подразделения по обеспечению образовательной и научной деятельности. | 4.2 Համալսարանի կազմի մեջ ներառվում են ըստ մասնագետների պատրաստման ուղղությունների՝ ֆակուլտետներ, ըստ գիտելիքների բնագավառների (ճյուղերի)՝ ամբիոններ, ասպիրանտուրա, դոկտորանտուրա, նախաբուհական կրթության կենտրոն՝ նախապատրաստական բաժիններով (ֆակուլտետներով և կուրսերով), գրադարան, հրատարակչություն, կրթական և գիտական գործունեությունն ապահովող ստորաբաժանումներ: |
| 4.3 **Факультет** является учебно-научным структурным подразделением, объединяющим группу родственных по | 4.3 **Ֆակուլտետը** հանդիսանում է կրթագիտական կառուցվածքային ստորաբաժանում, որը միավորում է |

| | |
|---|---|
| направлениям подготовки специалистов или составу обслуживаемых дисциплин кафедр, научных и учебных подразделений. | ամբիոններ՝ ըստ մասնագետների պատրաստման հարակից ուղղությունների կամ սպասարկվող առարկաների կազմի, ինչպես նաև գիտական և կրթական ստորաբաժանումներ: |
| Факультет: | Ֆակուլտետը՝ |
| - организует учебную, учебно-методическую, научную и воспитательную работы; | -կազմակերպում է ուսումնական, ուսումնամեթոդական, գիտական և դաստիարակչական աշխատանքներ, |
| - организует повышение квалификации и переподготовки специалистов; | -կազմակերպում է մասնագետների որակավորման և վերապատրաստման բարձրացում, |
| - организует выполнение образовательно-профессиональных программ по соответствующим направлениям и специальностям; | -կազմակերպում է համապատասխան ուղղություններով և մասնագիտություններով կրթական-մասնագիտական ծրագրերի կատարում, |
| - проводит учет контингента студентов факультета и их учебной успеваемости; | -անցկացնում է ֆակուլտետի ուսանողների համակազմի և իրենց ուսումնական առաջադիմության հաշվառում, |
| - организует работу по воспитанию студентов и пропаганде общечеловеческих ценностей; | -կազմակերպում է ուսանողների դաստիարակությանն և համամարդկային արժեքների քարոզչությանն ուղղված աշխատանքներ, |
| - планирует учебную, учебно-методическую, научную, организационно-методическую работы и организует отчетности по ним; | -ծրագրում է ուսումնական, ուսումնամեթոդական, գիտական, կազմակերպչամեթոդական աշխատանքներ և կազմակերպում դրանց վերաբերյալ հաշվետվություններ, |
| - принимает меры к повышению профессионального и морально-этического уровня работников факультета; | -միջոցներ է ձեռնարկում ֆակուլտետի աշխատողների մասնագիտական և բարոյաէթիկական մակարդակի բարձրացման ուղղությամբ, |
| - контролирует состояние учебных, производственных и служебных помещений, закрепленных за факультетом; | -վերահսկում է ֆակուլտետին ամրագրված ուսումնական, արտադրական և ծառայողական տարածքների վիճակը, |
| - организует профориентационную работу обучающихся и поддерживает связи с выпускниками факультета; | -կազմակերպում է սովորողների մասնագիտական կողմնորոշման աշխատանքը և կապեր է պաշտպանում ֆակուլտետի շրջանավարտների հետ, |
| - координирует научную работу факультета в соответствии с планами работ научных подразделений Университета; | -համակարգում է ֆակուլտետի գիտական աշխատանքը՝ Համալսարանի գիտական ստորաբաժանումների աշխատանքային ծրագրերին համապատասխան, |
| - организует сотрудничество с другими вузами по научной и учебной деятельности, проводимой на факультете; | -կազմակերպում է համագործակցություն այլ բուհերի հետ ֆակուլտետում իրականացվող գիտական և ուսումնական գործունեության ուղղությամբ, |
| - осуществляет распространение научных знаний и культурно-просветительской работы среди населения; | -իրականացնում է գիտական իմացության տարածման և մշակութային-լուսավորչական աշխատանքներ բնակչության շրջանում, |
| - в установленном порядке обеспечивает делопроизводство и документоведение по | -սահմանված կարգով ապահովում է ֆակուլտետի գործունեությանը |

| | |
|---|---|
| функционированию факультета;<br>- проводит мероприятия и принимает меры по обеспечению безопасности жизни и здоровья студентов и работников при проведении учебных занятий в закрепленных за факультетом помещениях.<br>Факультет возглавляет декан, избираемый в порядке, определяемом Уставом Университета, Ученым советом, положением о факультете, путем тайного голосования из числа наиболее квалифицированных и авторитетных работников Университета, имеющих ученую степень или звание, и утверждаемый в должности приказом ректора.<br>Деятельность декана факультета считается научно-педагогической работой.<br>Основные задачи, компетенция, права, формы управления и ответственность факультета, его взаимоотношения с другими подразделениями Университета определяются положением о факультете, утверждаемым Ученым советом. | վերաբերող գործավարությունը և փաստաթղթավարությունը,<br>-միջոցառումներ է անցկացնում և միջոցներ ձեռնարկում՝ ուղղված ուսանողների և աշխատակիցների կյանքի և առողջության անվտանգության ապահովմանը՝ ֆակուլտետին ամրագրված տարածքներում ուսումնական պարապմունքներ անցկացնելու ժամանակ:<br>Ֆակուլտետը գլխավորում է դեկանը, որն ընտրվում է Համալսարանի Կանոնադրությամբ, Գիտական խորհրդի, ֆակուլտետի մասին դրույթով սահմանված կարգով, փակ քվեարկությամբ, Համալսարանի գիտական աստիճան կամ կոչում ունեցող առավել հեղինակավոր և որակյալ աշխատողների կազմից և պաշտոնում հաստատվում է ռեկտորի հրամանով:<br>Ֆակուլտետի դեկանի գործունեությունը համարվում է գիտամանկավարժական աշխատանք:<br>Հիմնական խնդիրները, լիազորությունը, իրավունքները, կառավարման ձևերը և ֆակուլտետի պատասխանատվությունը, իր փոխհարաբերությունները Համալսարանի այլ ստորաբաժանումների հետ սահմանվում են Գիտական խորհրդի կողմից հաստատված ֆակուլտետի մասին դրույթով: |
| 4.4 **Кафедра** является основным учебно-научным структурным подразделением Университета, осуществляющим учебную, учебно-методическую, научно-методическую работу по одной или нескольким родственным дисциплинам, научные исследования, а также подготовку научно-педагогических кадров и повышение их квалификации. Кафедра может входить в состав факультета по родственным направлениям подготовки специалистов.<br>Кафедра:<br>- проводит все виды учебных занятий и учебной работы по всем формам получения образования;<br>- разрабатывает учебные планы по направлениям (специальностям), графики учебного процесса, рабочие программы по дисциплинам, | 4.4 **Ամբիոնը** հանդիսանում է Համալսարանի հիմնական ուսումնագիտական կառուցվածքային ստորաբաժանում, որն իրականացնում է ուսումնական, ուսումնամեթոդական, գիտամեթոդական աշխատանք մեկ կամ մի քանի հարակից առարկաներով, գիտական հետազոտումներ, ինչպես նաև գիտամանկավարժական կադրերի պատրաստում և նրանց որակավորման բարձրացում: Ամբիոնը կարող է ընդգրկվել ֆակուլտետի կազմի մեջ մասնագետների պատրաստման հարակից ուղղություններով:<br>Ամբիոնը՝<br>- անցկացնում է ուսումնական պարապմունքների և ուսումնական աշխատանքների բոլոր տեսակները՝ կրթություն ստանալու բոլոր ձևերով,<br>- մշակում է ուսումնական պլաններ՝ ըստ ուղղությունների (մասնագիտությունների), ուսումնական |

| | | |
|---|---|---|
| | закрепленным за кафедрой, всех видов практик, программы итоговой аттестации выпускников Университета;<br>- осуществляет комплексное методическое обеспечение всех учебных дисциплин, закрепленных за кафедрой, всех видов практик, дипломных работ и итоговой аттестации;<br>- обеспечивает высокий профессиональный уровень проведения лекционных, практических, семинарских и лабораторных занятий, рационально организовывает самостоятельную работу студентов;<br>- организует и осуществляет итоговую государственную аттестацию выпускников по закрепленным за кафедрой направлениям (специальностям) по всем формам получения образования;<br>- осуществляет подготовку и повышение квалификации научно-педагогических кадров, привлекает к педагогической деятельности ведущих ученых и специалистов научных учреждений и предприятий;<br>- принимает непосредственное участие в воспитании студентов и пропаганде общечеловеческих ценностей;<br>- организует научную деятельность по профилю кафедры, фундаментальные, поисковые, методические, педагогические и прикладные научные исследования, являющиеся неотъемлемой составной частью обучения и подготовки специалистов;<br>- участвует в научной деятельности Университета по теоретическим, научно-техническим, социально-экономическим, научно-методическим направлениям и педагогическим проблемам высшего профессионального образования;<br>- обсуждает, дает заключения и рекомендации по законченным | գործընթացի ժամանակացույցեր, ամբիոնին ամրագրված առարկաների աշխատանքային ծրագրեր, բոլոր տեսակի պրակտիկաների ծրագրեր, Համալսարանի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ծրագրեր,<br>- իրականացնում է ամբիոնին ամրագրված բոլոր կրթական առարկաների, բոլոր տեսակի պրակտիկաների, դիպլոմային նախագծման և ամփոփիչ ատեստավորման համալիր մեթոդական ապահովում,<br>- ապահովում է դասախոսական, գործնական, սեմինարական և լաբորատոր պարապմունքների բարձր մասնագիտական մակարդակը, արդյունավետորեն կազմակերպում ուսանողների ինքնուրույն աշխատանքը,<br>- կազմակերպում և իրականացնում է շրջանավարտների ամփոփիչ պետական ատեստավորումը՝ ամբիոնին ամրագրված ուղղություններով (մասնագիտություններով)՝ կրթություն ստանալու բոլոր ձևերով,<br>- իրականացնում է գիտամանկավարժական կադրերի պատրաստում և որակավորման բարձրացում, մանկավարժական գործունեության մեջ է ներգրավում գիտական հիմնարկների և ձեռնարկությունների առաջատար գիտնականներին և մասնագետներին,<br>- անմիջականորեն մասնակցում է ուսանողների դաստիարակության և համամարդկային արժեքների քարոզչության գործում,<br>- կազմակերպում է ամբիոնի ուղղվածությանը համապատասխանող գիտական գործունեություն՝ ուսուցման և մասնագետների պատրաստման անկապտելի մասը կազմող հիմնարար, որոնողական, մեթոդական, մանկավարժական և կիրառական գիտական հետազոտություններ,<br>- մասնակցում է Համալսարանի գիտական գործունեությանը՝ բարձրագույն մասնագիտական կրթության տեսական, գիտա-տեխնիկական, սոցիալ-տնտեսական, գիտա-մանկավարժական ուղղություններով և մանկավարժական խնդիրներով,<br>- քննարկում, եզրակացություններ և հանձնարարություններ է տալիս ավարտված գիտական մշակումներով՝ |

| | |
|---|---|
| 5.8 | Текущие вопросы деятельности Университета периодически рассматриваются на заседаниях **ректората**, который является совещательным органом при ректоре. Состав ректората и порядок его работы утверждается приказом ректора. Положение о ректорате утверждается Ученым советом Университета. Решения ректората носят рекомендательный характер и принимаются к исполнению приказом ректора. | 5.8 | Համալսարանի գործունեության ընթացիկ հարցերը պարբերաբար քննարկվում են **ռեկտորատի** նիստերին, որը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է: Ռեկտորատի կազմը և աշխատանքի կարգը հաստատվում է ռեկտորի հրամանով: Ռեկտորատի մասին դրույթը հաստատվում է Համալսարանի Գիտական խորհրդի կողմից: Ռեկտորատի որոշումներն ունեն հանձնարարական բնույթ և իրագործվում են ռեկտորի հրամանով: |
| 5.9 | **Проректора** принимаются на работу ректором по трудовому договору (контракту), срок окончания которого совпадает со сроком окончания полномочий ректора.<br>Распределение обязанностей между проректорами устанавливается приказом ректора Университета, который доводится до сведения всего коллектива. | 5.9 | Պրոռեկտորներն աշխատանքի են ընդունվում ռեկտորի կողմից՝ աշխատանքային պայմանագրով (կոնտրակտով), որի ավարտման ժամկետը համընկնում է ռեկտորի իրավասությունների ժամկետի ավարտի հետ:<br>Պրոռեկտորների միջև պարտականությունների բաշխումը սահմանվում է Համալսարանի ռեկտորի հրամանով, որը ծանուցվում է ողջ |

| | |
|---|---|
| | կոլեկտիվին: |
| 5.10 В структурных подразделениях Университета, осуществляющих образовательную и (или) научную деятельность, по решению Ученого совета могут создаваться выборные представительные органы - **советы**.<br>Порядок создания и деятельности, состав и полномочия совета структурного подразделения определяются Ученым советом Университета. | 5.10 Կրթական և (կամ) գիտական գործունեություն իրականացնող Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներում Գիտական խորհրդի որոշմամբ կարող են ստեղծվել ընտրովի ներկայացուցչական մարմիններ՝ **խորհուրդներ**:<br>Կառուցվածքային ստորաբաժանման խորհրդի ստեղծման և գործունեության կարգը, կազմը և իրավասությունները որոշվում են Համալսարանի Գիտական խորհրդի կողմից: |
| 5.11 Должности ректора, проректоров, руководителя (директора) филиала и деканов факультетов могут быть заняты лицами, отвечающими требованиям, предъявляемым в соответствии с законодательством Российской Федерации и Республики Армения к данной должности. Лица, переставшие соответствовать этим требованиям, освобождаются от занимаемой должности и переводятся с их согласия на иные должности, соответствующие их квалификации.<br>По представлению Ученого совета Университета соответствующие органы государственной власти Российской Федерации и Республики Армения вправе установить индивидуальный срок пребывания в должности ректора в соответствии с законодательством Российской Федерации и Республики Армения в области образования.<br>Для других руководящих должностей индивидуальный срок пребывания в должности может устанавливать ректор по представлению Ученого совета Университета. | 5.11 Ռեկտորի, պրոռեկտորների, մասնաճյուղի ղեկավարի (տնօրենի) և ֆակուլտետների դեկանների պաշտոնները կարող են զբաղեցնել այն անձիք, ովքեր Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն համապատասխանում են տվյալ պաշտոններին ներկայացվող պահանջներին: Այն անձիք, որոնք այլևս չեն համապատասխանում այդ պահանջներին, ազատվում են զբաղեցրած պաշտոնից և իրենց համաձայնությամբ փոխադրվում են իրենց որակավորմանը համապատասխանող այլ պաշտոնների:<br>Համալսարանի Գիտական խորհրդի ներկայացմամբ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության պետական իշխանության համապատասխան մարմինները կարող են սահմանել ռեկտորի պաշտոնը զբաղացնելու անհատական ժամկետ՝ կրթության ոլորտում Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:<br>Մյուս ղեկավար պաշտոնների համար պաշտոնը զբաղեցնելու անհատական ժամկետ կարող է սահմանվել ռեկտորի կողմից՝ Համալսարանի Գիտական խորհրդի ներկայացմամբ: |
| **6. КОЛЛЕКТИВ УНИВЕРСИТЕТА** | **6. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈԼԵԿՏԻՎԸ** |
| 6.1 Коллектив Университета составляют обучающиеся и работники Университета. | 6.1 Համալսարանի կոլեկտիվը կազմում են Համալսարանի սովորողները և աշխատողները: |

| | |
|---|---|
| Трудовые и социально-экономические отношения в коллективе Университета решаются на основе законодательства Российской Федерации и Республики Армения, а также в рамках коллективного договора, принятие и реализация которого определяются законодательством Российской Федерации и Республики Армения. | Համալսարանի կոլեկտիվի աշխատանքային և սոցիալ-տնտեսական հարաբերությունները կարգավորվում են Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիման վրա, ինչպես նաև կոլեկտիվ պայմանագրի շրջանակներում, որի ընդունումը և իրագործումը սահմանվում են Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: |
| 6.2 К обучающимся в Университете относятся студенты, аспиранты, соискатели, слушатели и другие категории обучающихся.<br>**Студентом** является лицо, в установленном порядке зачисленное приказом ректора в Университет для обучения по образовательной программе высшего профессионального образования. Студент получает высшее профессиональное образование по избранной специальности в пределах соответствующего государственного образовательного стандарта путем освоения соответствующей образовательной программы высшего профессионального образования.<br>**Аспирантом** является лицо, которое имеет высшее профессиональное образование, обучается в аспирантуре и подготавливает диссертацию на соискание ученой степени кандидата наук.<br>**Слушателями** Университета являются лица, обучающиеся:<br>а) в Центре довузовского образования;<br>б) в структурных подразделениях повышения квалификации и переподготовки специалистов;<br>в) в другом высшем учебном заведении, если они параллельно получают второе высшее профессиональное образование.<br>Правовое положение слушателей в отношении получения образовательных услуг соответствует статусу студента Университета соответствующей формы обучения.<br>Зачисление лиц в студенты, аспиранты, соискатели, слушатели и другие категории обучающихся Университета для получения образования соответствующего уровня осуществляется | 6.2 Համալսարանի սովորողներն են համարվում ուսանողները, ասպիրանտները, հայցորդները, ունկնդիրները և այլ կարգի սովորողները:<br>**Ուսանող է** համարվում այն անձը, ով սահմանված կարգով ռեկտորի կողմից հրամանագրվել է՝ Համալսարանում բարձրագույն մասնագիտական կրթության կրթական ծրագրերով սովորելու համար: Ուսանողը բարձրագույն մասնագիտական կրթություն է ստանում ընտրված մասնագիտությամբ համապատասխան պետական կրթական չափորոշիչների շրջանակներում կրթական ծրագրի յուրացման ճանապարհով:<br>**Ասպիրանտ է** համարվում այն անձը, ով ունի բարձրագույն մասնագիտական կրթություն, սովորում է ասպիրանտուրայում և նախապատրաստում է գիտության թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսություն:<br>Համալսարանի **ունկնդիրներն են** համարվում այն անձիք, ովքեր սովորում են՝<br>ա) նախապատրաստական կրթության Կենտրոնում,<br>բ) որակավորման բարձրացման և մասնագետների վերապատրաստման կառուցվածքային ստորաբաժանումներում,<br>գ) այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում, եթե զուգահեռ ստանում են երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն:<br>Կրթական ծառայություններ ստանալու առումով ունկնդրի իրավական կարգավիճակը համապատասխանում է Համալսարանի համապատասխան կրթական ձևի |

| | | | |
|---|---|---|---|
| | на основании приказа ректора. Для лиц, принятых для одновременного освоения двух основных образовательных программ высшего профессионального образования в одном или разных высших учебных заведениях, в приказе о зачислении в слушатели могут устанавливаться условия посещения учебных занятий, проведения практик и аттестаций. | | ուսանողի կարգավիճակին: Ուսանողների, ասպիրանտների, հայցորդների, ունկնդիրների և այլ կարգի սովորողների հրամանագրումը համապատասխան մակարդակի կրթություն ստանալու համար իրականացվում է ռեկտորի հրամանի հիման վրա: Նույն կամ տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում միաժամանակ երկու բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերը յուրացնելու համար որպես ունկնդիր ընդունված անձանց հրամանի մեջ կարող են սահմանվել ուսումնական պարապմունքներին հաճախելու, պրակտիկաների անցկացման և ատեստավորման պայմաններ: |
| 6.3 | Социальные гарантии, льготы, права, обязанности, меры поощрения и ответственности обучающихся устанавливаются законодательством Российской Федерации и Республики Армения, положениями и правилами, принятыми Ученым советом Университета и ректором, а также иными актами, регламентирующими деятельность Университета.<br>Университет в пределах имеющихся бюджетных и внебюджетных средств самостоятельно разрабатывает и реализует меры социальной поддержки студентов, в том числе устанавливает в зависимости от их материального положения и академических успехов стипендии, пособия и другие социальные выплаты в соответствии с положениями, утвержденными Ученым советом Университета. | 6.3 | Սովորողների սոցիալական երաշխիքները, արտոնությունները, իրավունքները, պարտականությունները, խրախուսման ու պատասխանատվության միջոցները սահմանվում են Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի Գիտական խորհրդի և ռեկտորի կողմից ընդունված դրույթներով ու կանոններով, ինչպես նաև Համալսարանի գործունեությունը կանոնակարգող այլ ակտերով:<br>Առկա բյուջետային և արտաբյուջետային միջոցների սահմաններում Համալսարանն ինքնուրույն մշակում և իրականացնում է ուսանողների սոցիալական աջակցությանն ուղղված միջոցառումներ, այդ թվում՝ նյութական վիճակից և ակադեմիական հաջողություններից կախված սահմանում է կրթաթոշակներ, նպաստներ և սոցիալական այլ վճարումներ՝ Գիտական խորհրդի կողմից հաստատված դրույթներին համապատասխան: |
| 6.4 | В соответствии с законодательством Российской Федерации и Республики Армения студент может быть отчислен из Университета:<br>- по собственному желанию;<br>- в связи с переводом в другой вуз;<br>- по состоянию здоровья на | 6.4 | Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ուսանողը կարող է հեռացվել Համալսարանից՝<br>– իր ցանկությամբ.<br>– այլ բուհ տեղափոխվելու կապակցությամբ. |

| | |
|---|---|
| основании справки ВКК;<br>- за академическую неуспеваемость;<br>- за нарушение условий договора (для обучающихся на платной основе);<br>- за нарушение Устава Университета;<br>- за нарушение правил внутреннего распорядка Университета.<br>За академическую неуспеваемость отчисляются студенты:<br>- не сдавшие в сессию экзамены по трем и более дисциплинам;<br>- не ликвидировавшие в установленные сроки академическую задолжность;<br>- получившие неудовлетворительную оценку при пересдаче одной и той же дисциплины аттестационной комиссии.<br>Отчисление студента Университета за нарушение обязанностей, предусмотренных Уставом Университета и правилами внутреннего распорядка, производится после получения от него объяснения в письменном виде. Дисциплинарное взыскание вплоть до отчисления применяется не позднее, чем через шесть месяцев со дня совершения, не считая времени болезни, каникул, отпуска по беременности и родам.<br>Отчисление по собственному желанию производится в срок не более месяца с момента подачи студентом заявления. | – առողջության վիճակից ելնելով՝ ԲՎՀ-ի տեղեկանքի հիման վրա.<br>– ակադեմիական վատ առաջադիմության պատճառով.<br>– պայմանագրի պայմանների խախտման համար (վճարովի համակարգում սովորողների համար).<br>– Համալսարանի Կանոնադրությունը խախտելու համար.<br>– Համալսարանի ներքին կարգապահական կանոնները խախտելու համար:<br>Ակադեմիական վատ առաջադիմության պատճառով հեռացվում են այն ուսանողները, որոնք ՝<br>– քննաշրջանում չեն հանձնել քննությունները երեք և ավելի առարկաներով.<br>– սահմանված ժամկետներում չեն մարել ակադեմիական պարտքը.<br>– ստացել են ոչ բավարար գնահատական միևնույն առարկան ատեստավորման հանձնաժողովին վերահանձման ժամանակ:<br>Ուսանողի հեռացումը Համալսարանի Կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով նախատեսված պարտականությունների խախտման համար իրականացվում է՝ նրանից գրավոր բացատրություն ստանալուց հետո:<br>Հեռացումը իր ցանկությամբ իրականացվում է ուսանողի կողմից դիմում տալու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում: |
| 6.5 В Университете предусматриваются должности научно-педагогического (профессорско-преподавательский состав, научные работники), инженерно-технического, административно-хозяйственного, производственного, учебно-вспомогательного и иного персонала.<br>К профессорско-преподавательским должностям относятся должности декана факультета, заведующего кафедрой, профессора, доцента, старшего преподавателя, преподавателя и ассистента.<br>Замещение всех должностей научно-педагогических работников в | 6.5 Համալսարանում նախատեսված են գիտամանկավարժական (պրոֆեսորադասախոսական կազմը, գիտական աշխատողները), ինժեներատեխնիկական, վարչատնտեսական, արտադրական, ուսումնաօժանդակ և այլ անձնակազմի պաշտոններ:<br>Պրոֆեսորադասախոսական պաշտոններն են՝ ֆակուլտետի դեկանը, ամբիոնի վարիչը, պրոֆեսորը, դոցենտը, ավագ դասախոսը, դասախոսը և ասիստենտը:<br>Բոլոր գիտամանկավարժական աշխատողների պաշտոնների համալրումն իրականացվում է |

| | | | |
|---|---|---|---|
| | Университете производится на конкурсной основе и по трудовому договору (контракту), заключаемому на срок до 5 лет. При замещении должностей научно-педагогических работников заключению трудового договора (контракта) предшествует конкурсный отбор.<br>Порядок замещения должностей профессорско-преподавательского состава и научных работников принимается Ученым советом на основании утвержденных соответствующими органами государственной власти Российской Федерации и Республики Армения правил. | | մրցութային կարգով և աշխատանքային պայմանագրով (կոնտրակտով), որը կնքվում է մինչև 5 տարի ժամկետով: Գիտամանկավարժական աշխատողների պաշտոնների համալրման ժամանակ աշխատանքային պայմանագրի (կոնտրակտի) կնքմանը նախորդում է մրցութային ընտրությունը:<br>Գիտամանկավարժական կազմի և գիտական աշխատողների պաշտոնների համալրման կարգն ընդունվում է Գիտական խորհրդի կողմից՝ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության համապատասխան պետական մարմինների կողմից հաստատված կանոնների հիման վրա: |
| 6.6 | Научно-педагогические работники Университета пользуются правами и выполняют обязанности в соответствии с законодательством Российской Федерации и Республики Армения, настоящим Уставом и иными актами Университета. | 6.6 | Համալսարանի գիտամանկավարժական աշխատողներն օգտվում են իրավունքներից և կրում են պարտականություններ՝ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, սույն Կանոնադրությանը և Համալսարանի այլ ակտերին համաձայն: |
| 6.7 | К педагогической деятельности в Университете допускаются лица, имеющие высшее профессиональное образование (бакалавры, дипломированные специалисты, магистры). В объявлениях о конкурсе Университет вправе устанавливать требования к уровню высшего образования и стажу работы по специальности. Образовательный ценз указанных лиц подтверждается документами о соответствующем уровне образования и (или) квалификации. | 6.7 | Համալսարանում մանկավարժական գործունեության իրավունք ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող անձինք (բակալավրներ, դիպլոմավորված մասնագետներ, մագիստրոսներ): Մրցույթի մասին հայտարարության մեջ Համալսարանը իրավունք ունի սահմանել բարձրագույն կրթության մակարդակին և մասնագիտությամբ աշխատելու ստաժին ներկայացվող պահանջներ: Նշված անձանց կրթական ցենզը հաստատվում է կրթության համապատասխան մակարդակի և (կամ) որակավորման մասին փաստաթղթերով: |
| 6.8 | Для работников Университета, осуществляющих педагогическую деятельность (далее - педагогические работники), продолжительность рабочего времени и ежегодного оплачиваемого отпуска устанавливается в соответствии с трудовым законодательством Российской Федерации и Республики Армения и коллективным договором Университета. | 6.8 | Մանկավարժական գործունեություն իրականացնող Համալսարանի աշխատողների (այսուհետ՝ մանկավարժական աշխատողներ) համար աշխատաժամանակի և ամենամյա վճարովի արձակուրդի տևողությունը սահմանվում է Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության աշխատանքային |

| | |
|---|---|
| | օրենսդրությանը և Համալսարանի կոլեկտիվ պայմանագրին համապատասխան: |
| 6.9 Учебная нагрузка для педагогических работников устанавливается Университетом самостоятельно в зависимости от их квалификации и профиля кафедры в размере до 900 часов в учебном году.<br>Расчет предельной численности профессорско-преподавательского состава по дневной форме обучения производится исходя из среднего соотношения, устанавливаемого законодательством Российской Федерации и Республики Армения. | 6.9 Մանկավարժական աշխատողների համար ուսումնական ծանրաբեռնվածությունը սահմանվում է Համալսարանի կողմից ինքնուրույն՝ պայմանավորված իրենց որակավորմամբ և ամբիոնի ուղղվածությամբ, մինչև 900 ժամի չափով՝ ուսումնական տարվա մեջ:<br>Ուսման ցերեկային ձևի պրոֆեսորադասախոսական կազմի առավելագույն քանակի հաշվարկն իրականացվում է՝ ելնելով Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվող միջին հարաբերակցությունից: |
| 6.10 Права и обязанности административно-хозяйственного, инженерно-технического, производственного, учебно-вспомогательного и иного персонала Университета определяются законодательством о труде Российской Федерации и Республики Армения, настоящим Уставом, правилами внутреннего распорядка Университета и должностными инструкциями. Трудовые отношения указанной категории работников регулируются на основании трудового договора (контракта). | 6.10 Համալսարանի վարչատնտեսական, ինժեներա-տեխնիկական, արտադրական, ուսումնաօժանդակ և այլ անձնակազմի իրավունքներն ու պարտականությունները որոշվում են Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, Համալսարանի ներքին կարգապահական կանոններով և պաշտոնական հրահանգներով: Աշխատողների նշված խմբերի աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են աշխատանքային պայմանագրերով (կոնտրակտներով): |
| 6.11 Работникам Университета за успехи в учебной, методической, научной, воспитательной работе и другой деятельности устанавливаются различные формы морального и материального поощрения. | 6.11 Համալսարանի աշխատողներին կրթական, մեթոդական, գիտական, դաստիարակչական աշխատանքի և այլ գործունեության մեջ հաջողությունների համար սահմանվում են բարոյական և նյութական խրախուսման տարբեր ձևեր: |
| **7. ЭКОНОМИКА УНИВЕРСИТЕТА** | **7. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ** |
| 7.1 Учредители передают Университету на праве, определяемом соглашением о создании и условиях деятельности Университета здания, сооружения, | 7.1 Հիմնադիրները Համալսարանի ստեղծման և գործունեության պայմանների մասին համաձայնագրով սահմանված իրավունքով |

| | |
|---|---|
| студенческие общежития, земельные участки, готовые объекты, с целью размещения учебного корпуса, а также спортивных, лечебно-профилактических, культурных и других учреждений. | Համալսարանին են փոխանցում շենքեր, շինություններ, ուսանողական հանրակացարաններ, հողամասեր, պատրաստի օբյեկտներ ուսումնական մասնաշենքի, ինչպես նաև սպորտային, բուժպրոֆիլակտիկ, մշակութային և այլ հիմնարկների համալրման նպատակով: |
| 7.2 За Университетом закрепляются в постоянное (бессрочное) пользование земельные участки, выделенные ему в установленном порядке. | 7.2 Համալսարանին մշտական (անժամկետ) օգտագործման իրավունքով ամրացվում են սահմանված կարգով տրամադրվող հողամասեր: |
| 7.3 Государственное имущество, переданное Университету, может отчуждаться в порядке и на условиях, установленных законодательством Российской Федерации и Республики Армения. Отчуждение может производиться при обоюдном согласии соответствующих органов государственной власти Российской Федерации и Республики Армения без нарушения имущественного паритета сторон. | 7.3 Համալսարանին փոխանցված պետական գույքը կարող է օտարվել Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով: Օտարումը կարող է իրականացվել Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության պետական իշխանության համապատասխան մարմինների փոխադարձ համաձայնության դեպքում՝ առանց կողմերի գույքային հավասարության (պարիտետի) խախտման: |
| 7.4 Имущество, приобретенное Университетом за счет средств, полученных от разрешенных видов деятельности, поступает в самостоятельное распоряжение Университета и учитывается на отдельном балансе. | 7.4 Գույքը, որը Համալսարանը ձեռք է բերում թույլատրված գործունեության տեսակներից ստացված միջոցներից անցնում է Համալսարանի ինքնուրույն տնօրինման և հաշվառվում է առանձին հաշվեկշռում: |
| 7.5 Университет вправе выступать в соответствии с законодательством Российской Федерации и Республики Армения в качестве арендатора и (или) арендодателя закрепленного имущества и земельных участков. | 7.5 Համալսարանը Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան իրավունք ունի հանդես գալու որպես ամրագրված գույքի և հողամասերի վարձատու և (կամ) վարձակալ: |
| 7.6 Университет несет ответственность за сохранность и эффективное использование закрепленного имущества. | 7.6 Համալսարանը պատասխանատվություն է կրում ամրագրված գույքի պահպանման և արդյունավետ օգտագործման համար: |
| 7.7 Университет отвечает по своим обязательствам средствами, находящимися в его распоряжении. При их недостаточности субсидиарную ответственность по обязательствам | 7.7 Համալսարանն իր պարտավորությունների համար պատասխանատու է իր տնօրինման տակ գտնվող միջոցներով: Դրանց ոչ բավարար լինելու դեպքում |

| | |
|---|---|
| Университета несут собственники соответствующего имущества в порядке, установленном законодательством Российской Федерации и Республики Армения. | Համալսարանի պարտավորություններով օժանդակ պատասխանատվություն են կրում համապատասխան գույքի սեփականատերերը՝ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենդրությամբ սահմանված կարգով: |
| 7.8 Финансовое обеспечение деятельности Университета осуществляется:<br>а) соответствующими органами государственной власти Российской Федерации и Республики Армения на паритетных началах, в том числе в форме субсидий за счет средств, предусмотренных в федеральном бюджете Российской Федерации и в государственном бюджете Республики Армения на образование и науку;<br>б) национальными и международными научными и образовательными фондами, программами, осуществляющими финансовую поддержку научно-исследовательских проектов и проектов в области образования на конкурсной основе;<br>в) получаемыми в благотворительных целях средствами;<br>г) добровольными и целевыми взносами юридических и физических лиц, в том числе иностранных попечителей, неправительственных фондов, общественных организаций и т.д.;<br>д) средствами, получаемыми от платной образовательной и иной, приносящей доход деятельности, а также другими, предусмотренными законодательством Российской Федерации и Республики Армения источниками. | 7.8 Համալսարանի գործունեության ֆինանսավորման ապահովումն իրականացվում է ՝<br>ա) Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության պետական իշխանության համապատասխան մարմինների կողմից հավասարության հիմունքներով՝ այդ թվում Ռուսաստանի Դաշնության դաշնային բյուջեում և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում կրթության և գիտության համար նախատեսված միջոցների հաշվին՝ լրահատկացումների ձևով,<br>բ) ազգային և միջազգային գիտական և կրթական հիմնադրամներով, մրցութային հիմունքներով գիտահետազոտական և կրթության բնագավառում նախագծերին ֆինանսական աջակցություն իրականացնող ծրագրերով,<br>գ) բարեգործական նպատակներով ստացված միջոցներից,<br>դ) իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր և նպատակային ներդրումներից՝ այդ թվում արտասահմանյան հոգաբարձուներից, ոչ կառավարական հիմնադրամներից, հասարակական կազմակերպություններից և այլն,<br>ե) վճարովի կրթական և այլ եկամտաբեր գործունեությունից ստացված միջոցներից, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ աղբյուրներից: |
| 7.9 Финансирование образовательной деятельности в части реализации образовательных программ начального общего, основного общего, среднего (полного) общего, начального, среднего, высшего и послевузовского профессионального образования осуществляется за счет средств соответствующих бюджетов с учетом | 7.9 Կրթական գործունեության ֆինանսավորումը տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր, միջնակարգ (լրիվ) ընդհանուր, տարրական, միջնակարգ, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության կրթական ծրագրերի իրականացման մասով իրականացվում է համապատասխան բյուջեների |

| | | | |
|---|---|---|---|
| | установленных государственных заданий по приему на основе государственных нормативов финансирования, определяемых в расчете на одного обучающегося и предусмотренных для соответствующих типов и видов образовательных учреждений. | | միջոցների հաշվին՝ ֆինանսավորման պետական նորմատիվների հիման վրա սահմանված ընդունելության պետական առաջադրանքները հաշվի առնելով, որոնք որոշվում են մեկ սովորողի հաշվարկով և նախատեսված են կրթական հիմնարկների համապատասխան տիպերի և տեսակների համար: |
| 7.10 | Университет осуществляет расходование бюджетных средств и средств иных источников финансирования в соответствии с законодательством Российской Федерации и Республики Армения и иными актами. | 7.10 | Համալսարանը բյուջետային միջոցների և ֆինանսավորման այլ աղբյուրների միջոցների ծախսումն իրականացնում է Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ ակտերին համապատասխան: |
| 7.11 | Привлечение Университетом дополнительных средств не влечет за собой снижения государственных нормативов финансирования и (или) размеров финансирования, предусмотренных в соответствующем бюджете. | 7.11 | Համալսարանի կողմից լրացուցիչ միջոցների ներգրավումը չի հանգեցնում պետական ֆինանսավորման նորմատիվների և (կամ) համապատասխան բյուջեով սահմանված ֆինանսավորման չափի նվազեցմանը: |
| 7.12 | Университет по договорам с юридическими и (или) физическими лицами вправе осуществлять прием для обучения и подготовки специалистов соответствующего уровня образования с оплатой стоимости обучения, оказывать платные дополнительные образовательные услуги, не предусмотренные соответствующими образовательными программами и государственными образовательными стандартами.<br>Указанные виды деятельности не могут быть оказаны взамен и в рамках образовательной деятельности, финансируемой за счет средств соответствующего бюджета.<br>Стоимость обучения и размер оплаты за предоставление дополнительных образовательных услуг устанавливаются приказом ректором Университета с учетом утвержденной сметы доходов и расходов Университета. | 7.12 | Համալսարանն իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց հետ պայմանագրերով իրավունք ունի իրականացնել կրթության համապատասխան մակարդակի մասնագետների ուսուցանման և պատրաստման ընդունելություն՝ ուսման արժեքի վճարմամբ, մատուցել համապատասխան կրթական ծրագրերով և պետական կրթական չափորոշիչներով չնախատեսված վճարովի լրացուցիչ կրթական ծառայություններ:<br>Գործունեության նշված տեսակները չեն կարող մատուցվել համապատասխան բյուջեների միջոցների հաշվին ֆինանսավորվող կրթական գործունեության փոխարեն և շրջանակներում:<br>Ուսման արժեքը և լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցման համար վարձատրման չափը սահմանվում են Համալսարանի ռեկտորի հրամանով՝ հաշվի առնելով Համալսարանի հաստատված ծախսերի նախահաշիվը: |
| 7.13 | Университет самостоятельно решает вопросы, связанные с заключением | 7.13 | Համալսարանն ինքնուրույն է որոշում պայմանագրերի կնքման, |

| | | | |
|---|---|---|---|
| | договоров, определением обязательств и иных условий, не противоречащих законодательству Российской Федерации и Республики Армения и своему Уставу. | | պարտավորությունների որոշման և Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և իր կանոնադրությանը չհակասող այլ պայմանների հետ կապված հարցերը: |
| 7.14 | Университет в пределах имеющихся у него средств на оплату труда самостоятельно, в установленном порядке, на основании приказа ректора (в отдельных случаях по решению Ученого совета) определяет размеры доплат и надбавок, премий и других выплат работникам Университета. | 7.14 | Համալսարանը, աշխատանքի վարձատրման համար նախատեսված միջոցների սահմաններում, ինքնուրույն, սահմանված կարգով՝ ռեկտորի հրամանի հիման վրա (առանձին դեպքերում՝ Գիտական խորհրդի որոշմամբ) որոշում է Համալսարանի աշխատողներին հավելումների և հավելավճարների, պարգևատրումների և այլ վճարումների չափերը: |
| 7.15 | Университет, не в ущерб своей основной образовательной и научной деятельности, вправе осуществлять все виды не запрещенной законодательством Российской Федерации и Республики Армения предпринимательской и приносящей доход деятельности (включая внешнеэкономическую), в том числе:<br>- оказание платных услуг библиотеки, вычислительной техники, оргтехники, транспорта и других видов оборудования;<br>- оказание услуг по предоставлению в пользование спортивных залов и сооружений, концертного зала, объектов общественного питания, бассейна, предоставление услуг в области культуры и спорта;<br>- организация туристической деятельности (в том числе международной), публичного показа кино- и видеофильмов;<br>- организация общественного питания и досуга студенческой молодежи;<br>- предоставление консультативных, лизинговых, информационных, телекоммуникационных, маркетинговых, рекламных, аудиторских, посреднических, сервисных, архитектурно-проектных, архитектурно-планировочных, строительных и транспортных работ, юридических и коммунальных услуг населению и юридическим лицам;<br>- осуществление мероприятий и (или) оказание услуг в области защиты государственной тайны и конфиденциальной информации, | 7.15 | Համալսարանն ոչ ի վնաս իր հիմնական կրթական և գիտական գործունեության, իրավունք ունի իրականացնել Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ձեռնարկատիրական և եկամուտ բերող գործունեություն (ներառյալ արտաքին տնտեսական), այդ թվում՝<br>- գրադարանի, հաշվիչ տեխնիկայի, կազմտեխնիկայի, տրանսպորտի և այլ տեսակի սարքավորման վճարովի ծառայության իրականացում,<br>- մարզադահլիճների և կառույցների, համերգային դահլիճի, հասարակական սննդի օբյեկտների, լողավազանի օգտագործման տրամադրման ծառայությունների մատուցում,<br>- զբոսաշրջության գործունեության (այդ թվում միջազգային), կինո- և տեսաֆիլմերի հանրային ցուցադրման կազմակերպում,<br>- հասարակական սննդի և ուսանող երիտասարդության ժամանցի կազմակերպում,<br>- բնակչությանը և իրավաբանական անձանց խորհրդատվական, լիզինգային, տեղեկատվական, հեռուստահաղորդակցական, մարքետինգային, գովազդային, աուդիտորային, միջնորդային, սպասարկման, ճարտարապետանախագծային, ճարտարապետահատակագծային, շինարարական եւ տրանսպորտային աշխատանքների, իրավաբանական և կոմունալ ծառայությունների մատուցում, |

| | |
|---|---|
| проведение специальных экспертиз предприятий в области защиты государственной тайны, проведение в установленном законом порядке работ в области разработки, создания, распространения и сертификации средств защиты информации, оказание услуг в области криптографической защиты информации;<br>- осуществление издательской, типографской и полиграфической деятельности, оказание услуг в этой области, реализация собственной и приобретенной книгопечатной и другой издательской продукции;<br>- реализация наукоемкой и программной продукции, производимой Университетом;<br>- сдача в аренду основных фондов и имущества Университета;<br>- участие за счёт средств и имущества, находящихся в самостоятельном распоряжении Университета в деятельности других предприятий, учреждений и организаций;<br>- приобретение за счет средств, находящихся в самостоятельном распоряжении Университета и реализация ценных бумаг и получение доходов (дивидендов) по ним.<br>Виды деятельности, требующие в соответствии с законодательством лицензирования, осуществляются только после получения соответствующей лицензии.<br>Университет осуществляет функции субъекта рынка в Российской Федерации и Республике Армения в статусе резидента каждого из них. | - պետական գաղտնիքի և կոնֆիդենցիալ տեղեկատվության պահպանության բնագավառում միջոցառումների և (կամ) ծառայությունների մատուցման իրականացում, պետական գաղտնիքի պահպանության բնագավառում ձեռնարկությունների հատուկ փորձագիտությունների անցկացում, տեղեկատվության պահպանման միջոցների մշակման, ստեղծման, տարածման և սերտիֆիկացման բնագավառում աշխատանքների անցկացում՝ օրենքով սահմանված կարգով, տեղեկատվության գաղտնագրային պահպանման բնագավառում ծառայությունների մատուցում,<br>- հրատարակչական, տպագրական և պոլիգրաֆիկ գործունեության իրականացում, ծառայությունների մատուցում այդ բնագավառում, սեփական և ձեռքբերած գրատպական և այլ հրատարակչական արտադրանքի իրացում,<br>- Համալսարանի կողմից արտադրվող գիտատար և ծրագրային արտադրանքի իրացում,<br>- Համալսարանի հիմնական ֆոնդերի և գույքի վարձակալության հանձնում,<br>- Համալսարանի ինքնուրույն տնօրինման տակ գտնվող միջոցների և գույքի հաշվին այլ ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների գործունեությանը մասնակցում,<br>- Համալսարանի ինքնուրույն տնօրինման տակ գտնվող միջոցների հաշվին արժեթղթերի ձեռքբերում եւ դրանց իրացում և դրանցով եկամուտների (շահութաբաժինների) ստացում,<br>Գործունեության տեսակները, որոնք օրենսդրությանը համապատասխան պահանջում են լիցենզավորում, իրականացվում են միայն համապատասխան լիցենզիան ստանալուց հետո:<br>Համալսարանն իրականացնում է Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության շուկայի սուբյեկտի գործառույթներ՝ յուրաքանչյուրի ռեզիդենտի կարգավիճակով: |
| 7.16 Университет вправе использовать | 7.16 Համալսարանն իրավունք ունի |

| | |
|---|---|
| дополнительно привлеченные средства на его функционирование и развитие, осуществление образовательного процесса, в том числе приобретение предметов хозяйственного обихода, обустройство интерьера, проведение ремонтных работ, организацию досуга и отдыха членов коллектива, различные виды доплаты работникам и другие нужды. | լրացուցիչ ներգրավված միջոցներն օգտագործել իր գործելու և զարգացման նպատակով, կրթական գործընթացի իրականացմանը, այդ թվում՝ կենցաղային առարկաների ձեռք բերման, ներքին հարդարման, վերանորոգման աշխատանքների անցկացման, կոլեկտիվի անդամների ժամանցի և հանգստի կազմակերպման, աշխատողներին տարբեր տեսակի հավելավճարի և այլ կարիքների համար: |
| **8. УЧЕТ, ОТЧЕТНОСТЬ И КОНТРОЛЬ** | **8. ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ** |
| 8.1 Университет осуществляет оперативный бухгалтерский учет в соответствии с законодательством Российской Федерации и Республики Армения. | 8.1 Համալսարանն իրականացնում է օպերատիվ հաշվապահական հաշվառում՝ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: |
| 8.2 Формы бухгалтерской отчетности устанавливаются Министерством финансов Российской Федерации и Министерством финансов Республики Армения. Сроки предоставления квартальной и годовой бухгалтерской отчетности устанавливаются Федеральным агентством по образованию и Министерством образования и науки Республики Армения. | 8.2 Հաշվապահական հաշվառման ձևերը սահմանվում են Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից: Եռամսյակային և տարեկան հաշվապահական հաշվետվությունների ներկայացման ժամկետները սահմանում է Կրթության դաշնային գործակալությունը եւ Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարությունը: |
| 8.3 Контроль за соблюдением финансово-хозяйственной дисциплины Университета осуществляется соответствующим органами государственной власти Российской Федерации и Республики Армения. | 8.3 Համալսարանի ֆինանսատնտեսական կարգապահության պահպանման վերահսկողությունն իրականացվում է Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության պետական իշխանության համապատասխան մարմինների կողմից: |
| **9. РЕОРГАНИЗАЦИЯ И ЛИКВИДАЦИЯ УНИВЕРСИТЕТА** | 9. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ |
| 9.1 Университет в установленном законодательством Российской Федерации и Республики Армения порядке может быть реорганизован или ликвидирован. | 9.1 Համալսարանը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել՝ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: |

| | |
|---|---|
| 9.2 При реорганизации или ликвидации Университета увольняемым работникам гарантируется соблюдение их прав и интересов в соответствии с гражданским и трудовым законодательством Республики Армения. | 9.2 Համալսարանի վերակազմակերպման կամ լուծարման ժամանակ աշխատանքից ազատվող աշխատողներին երաշխավորվում է իրենց իրավունքների և շահերի պահպանում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և աշխատանքային օրենսդրություններին համապատասխան: |
| 9.3 При ликвидации Университета имущество, находящееся на его балансе, за вычетом платежей по покрытию своих обязательств, разделяется между государствами-учредителями с учетом обязательств сторон. | 9.3 Համալսարանի լուծարման ժամանակ դրա հաշվեկշռում գտնվող գույքը, իր պարտականությունների հատուցմանը ուղղված վճարումները հանելով, բաժանվում է հիմնադիր-պետությունների միջև՝ հաշվի առնելով կողմերի պարտականությունները: |